

ՅԱԿՈԲ ԱՐՔԵՂՍ. ԳԸԼԸՆՃԵԱՆԻ ՆՈՐ ԳԻՐՔԸ

Մոնթեվիդեոյի մէջ լոյս տեսաւ Ուրուկուահայոց առաջնորդ Յակոբ արքեպս. Գըլըն-ճեանի «Նաւարի եւ Բանականութեան հետքերով» գիրքը՝ նուիրում Սուրբ Էջմիածնի Սայր Տաճարի հիմնադրութեան 1700-ամեակին:

Անելի քան 500 էջ ունեցող գիրքը հրապարակուած է բարերար Էփուարփօ Սեֆերեանի միջոցներով եւ կ'ամփոփէ Յակոբ արքեպս. Գըլընճեանի յօդուածները կրօնական հարցերու շուրջ, ինչպէս նաեւ որոշ քաղաածներ Սրբազանի վերջին գիրքերէն՝ «Մարտին Լութեր, մի բարեպաշտ վանականի ըմբոստութիւնը», «Մեկնութիւն Արարածոց» եւ «Կոհելէթ կամ Գիրք Ժողովողի»:

Ինչպէս հեղինակը կը նշէ՝ հապորին մէջ, շարադրուած նիւթերու արծարծումը առիթ կ'ընծայէ իւրաքանչիւր հաւաքացեալի առաւել ճոխացնելու գիտելիքները եւ որոշ չափով ալ ապահովելու հոգեւոր ներշնչանք եւ փորձառութիւն:

ՌԱՏԻՕ ԱՐՄԵՆԻԱ
ՈՒՐՈՒԿՈՒԱՅ